ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» Հուլիսի 2016թ. № 48-Ա

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի N183 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԻԵՆԱԼԵ 2016» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1294-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հուլիսի 15-ի «Երևանյան ճարտարապետական բիենալե» համահայկական մրցույթ-ցուցահանդեսի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու ու «Երևանյան ճարտարապետական բիենալե 2014» համահայկական մրցույթ-ցուցահանդեսի կազմակերպման և անցկացման մասին» N183 հրամանի N1 հավելվածի՝

1) 4-րդ կետում «(այսուհետ՝ Կազմակերպիչ)» բառերից հետո լրացնել «, համագործակցելով Հայաստանի ճարտարապետների միավորման հետ» բառերը, իսկ «info@mud.am» բառերը փոխարինել «info@minurban.am» բառերով,

2) 7-րդ կետի 3-րդ ենթակետում «ցուցադրումը» բառը փոխարինել «ցուցահանդեսը» բառով:

2. Հաստատել «Երևանյան ճարտարապետական բիենալե 2016» համահայկական մրցույթ-ցուցահանդեսի անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

3. ՀՀ քաղաքաշինության նախարարի մամուլի քարտուղար Ա.Եսայանին՝ ապահովել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հուլիսի 15-ի N183 հրամանի N1 հավելվածի 5-րդ կետի 6-րդ ենթակետի կատարումը:

Նախարար՝ **Ն. ՍԱՐԳՍՅԱՆ**

«23» Հուլիսի 2016թ.
ք.Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության նախարարի
2016 թվականի [illegible] 23 –ի
N..48-Ն..հրամանի

ԾՐԱԳԻՐ
«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԻԵՆԱԼԵ 2016» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

NN	Միջոցառում	Ժամկետ
1.	Բիենալեի անցկացման մասին հայտարարություն	2016թ. մարտ
2.	Բիենալեի կազմակերպման և անցկացման աշխատանքային խմբի ստեղծում (Բիենալեի Տնօրինության կողմից)	2016թ. մարտ-ապրիլ
3.	Ցուցադրանյութերի ձևավորման, տպագրության, դրանց տեղադրման աշխատանքների կազմակերպում (մասնակցի ցանկությամբ)	2016թ. սեպտեմբերի 20-30-ը
4.	Մրցութային հանձնաժողովի աշխատանքի կազմակերպում	2016թ. հոկտեմբերի 1-8-ը
5.	Ցուցահանդեսի մոնտաժ	2016թ. հոկտեմբերի 7-ին
6.	Բիենալեի հանդիսավոր բացում	2016թ. հոկտեմբերի 10-ին
7.	Մամլո ասուլիս, արդյունքների հանրահռչակում	2016թ. հոկտեմբեր
8.	Դասախոսությունների, վարպետաց դասերի, քննարկումների կազմակերպում	2016թ. հոկտեմբեր-նոյեմբեր
9.	Բիենալեի կատալոգի ձևավորում և տպագրում	2016թ. դեկտեմբերի 25-ին
10.	Բիենալեի հանդիսավոր փակում	2016թ. դեկտեմբերի 25-ին
11.	Ներկայացված աշխատանքների արխիվացում	2016թ. դեկտեմբերի 25-30-ը
12.	Բիենալեի ընթացքի և արդյունքների մասին պարբերաբար հաշվետվությունների կազմում և ներկայացում զանգվածային լրատվամիջոցներին	2016թ. ընթացքում